

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«-----» ----- 2016թ.

N-----Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N286 որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետով և հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 2015 թվականի դեկտեմբերի 23-ի հ.451-Ն որոշումը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն՝ Հասմիկ Ջաներյանին և Արամ Ղահրամանյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Մոլդովական փողոցի հ.3/3 և Մելքումովի փողոցի հ.30/1 հասցեներում, տարածագնահատման 6-րդ և 7-րդ գոտիներում գտնվող համապատասխանաբար 190.0քմ և 800.0քմ մակերեսով հողամասերը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.02122015-01-0028 և հ.26112015-01-0049 վկայականներ) փոխանակել Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող, Աշտարակի խճուղուն հարակից՝ «Հույսի ավան»-ի հարևանությամբ և տարածագնահատման 7-րդ գոտում գտնվող 1092.3 քմ մակերեսով հողամասի հետ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Քննարկվող նախագծով նախատեսվում է Հասմիկ Զանեթյանին և Արամ Ղահրամանյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող Մոլդովական փողոցի հ.3/3 և Մելքումովի փողոցի հ.30/1 հասցեներում, տարածագնահատման 6-րդ և 7-րդ գոտիներում գտնվող համապատասխանաբար՝ 190.0 քմ և 800.0 քմ մակերեսով հողամասերը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.02122015-01-0028 և հ.26112015-01-0049 վկայականներ) փոխանակել Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող, Աշտարակի խճուղուն հարակից՝ «Հույսի ավան»-ի հարևանությամբ և տարածագնահատման 7-րդ գոտում գտնվող 1092.3 քմ մակերեսով հողամասի հետ:

Հարկ է նշել, որ Մոլդովական փողոցի հ.3/3 և Մելքումովի փողոցի հ.30/1 հասցեներում գտնվող հողամասերը քաղաքացիների կողմից նախկինում սահմանված կարգով ձեռք են բերվել Երևանի քաղաքապետարանից: Մոլդովական փողոցի հ.3/3 հասցեում գտնվող հողամասի համար քաղաքացիների կողմից ճարտարապետահատակագծային առաջադրանքի հիման վրա մշակվել է կառուցապատման նախագիծ, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի կողմից տրամադրվել է շինարարության թույլտվություն, որը սակայն չի իրագործվել: Հետագայում, նշված տարածքը Երևանի քաղաքապետարանի կողմից վերածվել է ընդհանուր օգտագործման տարածք հանդիսացող կանաչ գոտու, ինչի արդյունքում ներկայումս նշված տարածքում կառուցապատում հնարավոր չէ իրականացնել:

Մելքումովի փողոցի հ.30/1 հասցեում գտնվող հողամասի համար քաղաքացիների կողմից ճարտարապետահատակագծային առաջադրանքի հիման վրա մշակվել է կառուցապատման նախագիծ, որը նույնպես չի իրագործվել, իսկ ժամանակի ընթացքում նկատի ունենալով, որ հարակից տարածքներում իրականացվել է կառուցապատում, այժմ քաղաքաշինական իրավիճակի հստակեցման աշխատանքների նկատառումներից ելնելով, անհրաժեշտություն է առաջացել վերանայել քաղաքացիներին տրամադրված ճարտարապետահատակագծային առաջադրանքը:

Հաշվի առնելով նշվածը, տվյալ հողամասի սեփականատերերի հետ բանակցությունների արդյունքում նպատակահարմար է գտնվել կատարել հողամասերի փոխանակում, ինչի պարագայում հնարավոր կլինի ապահովել տարածքի առավել կանոնակարգված քաղաքաշինական իրավիճակը:

Միաժամանակ կատարվել է անշարժ գույքի շուկայական արժեքի գնահատման աշխատանքներ, որից հետևում է, որ Մոլդովական փողոցի հ.3/3 հասցեում գտնվող հասարակական նշանակության 190.0 քմ մակերեսով հողամասի շուկայական արժեքը կազմում է մոտ 5.500.000 ՀՀ դրամ, իսկ Մելքումովի փողոցի հ.30/1 հասցեում գտնվող հասարակական նշանակության 800.0 քմ մակերեսով հողամասի շուկայական արժեքը՝ 23.000.000 ՀՀ դրամ: Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Աշտարակի խճուղուն հարակից՝ «Հույսի ավան»-ի հարևանությամբ գտնվող 1092.3 քմ մակերեսով հողամասի շուկայական արժեքը կազմում է մոտ 18.500.000 ՀՀ դրամ: Փաստորեն, քաղաքացիներին սեփականության իրավունքով պատկանող հողամասերի շուկայական արժեքը մոտ 10.000.000 ՀՀ դրամով ավել է Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող քննարկվող հողամասի արժեքից:

Հասմիկ Զանեթյանը և Արամ Ղահրամանյանը պարտավորվել են նաև փոխանակման արդյունքում հրաժարվելու փոխանակվող հողամասերի գնահատված շուկայական արժեքի տարբերությունից:

Փոխանակվող հողամասերը ընդգրկված չեն ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի կազմում և գտնվում են Երևան քաղաքի հողերի տարածագնահատման 6-րդ և 7-րդ գոտիներում:

Համաձայն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թ. ապրիլի 12-ի հ.286 որոշմամբ հաստատված կարգի 32-րդ կետի՝ համայնքի վարչական սահմաններում, համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերը փոխանակվում են համայնքի ավագանու համաձայնությամբ՝ համայնքի ղեկավարի որոշման հիման վրա:

Ելնելով վերոգրյալից անհրաժեշտություն է առաջացել կայացնելու ավագանու համապատասխան որոշում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

**«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ
ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ
ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՅԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Երևան քաղաքի ավագանու «Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

**«ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ
ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ
ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԱՍԻՆ**

Երևան քաղաքի ավագանու «Հողամասերի փոխանակությանը համաձայնություն տալու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ